

14292



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«26» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 296 - 24

Նախաձեռնող՝

«ՄԵԳԱ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Արագածոտնի մարզ Կաքավաձոր 1փ, 1նրբ. 10փոուն

Գործունեությունը՝

Օթևանի տուֆերի հանքավայրի «Վահանատուֆ» տեղամասի
օգտակար հանածոյի արդյունահանում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 296 - 24

«26» օգոստոսի 2024թ.

Օթևանի տուֆերի հանքավայրի «Վահանատուֆ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Մեգա Սթոուն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Մեծածոր համայնք, Օթևան բնակավայր

Ներածական մաս. «Մեգա Սթոուն» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսվում է Արագածոտնի մարզի Մեծածոր համայնքի Օթևան բնակավայրի վարչական տարածքում իրականացնել Օթևանի տուֆերի հանքավայրի «Վահանատուֆ» տեղամասի տուֆերի արդյունահանում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Օթևանի տուֆերի հանքավայրի «Վահանատուֆ» տեղամասը գտնվում է Արագածոտնի Օթևան գյուղից մոտ 1.7 կմ հյուսիս-արևմուտք 2045-2078 մ բացարձակ բարձրության նիշերի վրա: Նախագծով բացահանքի օտարման մակերեսը կազմում է 3.6 հա: Տեղամասի տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ 40°22'49" և արևելյան երկայնությունը՝ 44° 03'18": Մոտակա բնակավայրերն են Օթևան, Մեծածոր, Կաքավաձոր, Ներքին Բազմաբերդ և Վերին Բազմաբերդ գյուղերը:

Նախատեսվող հանքի տարածքը կապված է S-1-60 տեղական նշանակության ավտոճանապարհի հետ մոտ 1.8 կմ երկարությամբ գրունտային ճանապարհով:

Համաձայն գնահատման հաշվետվության հայցվող տարածքում գտնվող և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:



Հանքավայրի և հարակից տարածքները առնչություն չունեն բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության հուշարձանների հետ: Հայցվող տարածքում բացակայում են սողանքային երևույթները: «Վահանատուֆ» տեղամասի տուֆերի հանքավայրի տարածքում ստորերկրյա ջրեր և ելքեր (աղբյուրներ) չեն հայտնաբերվել, ինչը պայմանավորված է շրջանը կազմող տուֆերի բարձր ջրաթափանցելիությամբ: Օթևանի տուֆերի հանքավայրի Վահանատուֆ տեղամասի ապարները ծագումնաբանորեն հարում է Թալին-Շամիրամի տուֆային ծածկոցին: Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենի, միջին չորրորդականի հրաբխային և ժամանակակից փոխը-բեկորային առաջացումները: Տուֆերը ներկայացված են հիմնականում մոխրագույն և վարդագույն տարատեսակներով: Տուֆերի հաստվածքը մեղմաթեք անկում է հարավ-արևելք՝ մոտ 3-10° անկյան տակ: Տուֆերի հաստվածքի վերին հատվածը ներկայացված է հողմահարված, խիստ ճեղքվորված ապարով՝ «փուշտա»: Այս շերտի հզորությունը տատանվում է 0.7-ից 1.0 մ-ի սահմաններում, կազմելով միջինը՝ 0.85 մ: Տուֆերի հաստվածքի ստորին հատվածը ներկայացված է թույլ ճեղքավորված թարմ մոխրավարդագույն տուֆերով (օգտակար հանածո): Թարմ տուֆերի հզորությունը տատանվում է 9.5-ից 17.2 մ-ի սահմաններում, կազմելով միջինը՝ 14.51 մ:

Տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.05.2024թ.-ի № 1034-Ա հրամանով: Բլոկների ելքը լեռնային զանգվածից ընդունվել է 42.66°:

Հաստատված պաշարները դիտարկվել են որպես.

1) ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման հումք՝ ԳՕՍՍ 4001-2013 «Պատքարեր լեռնային ապարներից»:

2) թույլատրելի է համարվել ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման ընթացքում ԳՕՍՍ 4001-2013 չբավարարող տուֆերից և տուֆերի ջարդքարից ստացվող խճի և ավազի օգտագործում որպես լցանյութ ՈՒՍ 150 մակնիշի խճի և ըստ լցոնի խտության 1300 մակնիշի ավազ պահանջող բետոնի, ինչպես նաև այլ տեսակի շինարարական աշխատանքների համար՝ ԳՕՍՍ 22263-76 «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից»:

Հայցվող տարածքի ծայրակետային կորդինատները WGS-84 (ARMREF 02) համակարգով.

N/N	Կորդինատները	
	X	Y
1.	4472249.363	8419658.805
2.	4472412.622	8419817.515
3.	4472268.267	8419874.250
4.	4472250.000	8419840.000

N/N	Կորդինատները	
	X	Y
5.	4472190.610	8419809.535
6.	4472114.856	8419770.676
7.	4472044.246	8419734.456
1.	4472249.363	8419658.805

Վահանատուֆ տեղամասի բացահանքում նախկինում իրականացվել են մակաբացման աշխատանքներն, հանքի հարակից հատվածներում ձևավորված են արտաքին լցակույտերը, բացահանքի հյուսիս-արևելյան հատվածում կազմակերպված է արտադրական հրապարակը, առկա է գործող ճանապարհ: Նախատեսվող գործունեության տարածքում հողաբուսական շերտն արդեն իսկ հեռացված է: Նախագծին համապատասխան կատարվելիք աշխատանքների շրջանակներում բացահանքի 2.07 հա տարածքից հեռացվելու է մոտ 2699 մ2 հողային զանգված: Նույն մակերեսներում խախտվելու է տափաստանային նոսր բուսականությամբ ներկայացված բուսածածկը: Օթևանի «Վահանատուֆ» տեղամասի երկրաբանական, **հիդրոերկրաբանական** և



գեոմորֆոլոգիական պայմանները նպաստավոր են արդյունահանումն իրականացնելու բաց եղանակով:

Օթևանի հանքավայրի «Վահանատուֆ» տեղամասի բացահանքը նախատեսվում է շահագործել մեկ տեղամասով:

Արդյունահանվող պաշարները կկազմեն 314.936 հազ. մ³ (406.442 մ³ մարվող)՝ B կարգով: Ծառայման ժամկետը ընդունվում է 20 տարի: Կորզվող պաշարները կազմում են ընդամենը 314.936 հազ. մ³ տուֆ, բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում 20322 մ³ մարվող կամ 15747 մ³ արդյունահանվող տուֆի զանգված:

Հանքավայրի շահագործումը իրականացվելու է բաց լեռնային աշխատանքներով և նախատեսվում է՝

- արդյունահանված ուղիղ կտրվածքի քարի իրացում տեղում, սպառողի ավտոտրանսպորտով,
- արդյունահանման աշխատանքների կատարում մեխանիզացված CMP-026/1 քարհատ մեքենայի միջոցով,
- մշակված տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա,
- բացահանքի արտադրական հրապարակում բեռնարկղային տիպի գրասենյակի տեղադրում:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝

- Բացահանքի առավելագույն երկարությունը - 282.0 մ,
- Բացահանքի առավելագույն լայնությունը - 218.0 մ,
- Մշակվող տուֆերի հաստաշերտի միջին հզորությունը -11.18 մ,
- Օգտակար հանածոյի առավելագույն խորությունը 19.5 մ,
- Բացահանքի օտարման մակերեսը - 3.6 հա,
- Տուֆերի հաշվեկշռային պաշարները - 406.442 հազ.մ³,
- Տուֆերի կորզվող պաշարները - 314.936 հազ.մ³,
- Մակաբացման ապարների ծավալը - 48378 հազ.մ³ (որից՝ 2699մ³ հողաբուսական շերտ)

Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքները սկսվելու են բացահանքի հյուսիս-արևելյան մասից՝ անցնող ավտոճանապարհից դեպի հանքավայր մուտքային ավտոճանապարհների անցումով (հարթեցում): Մուտքային ավտոճանապարհի երկարությունը դեպի հանքավայր կազմում է 100-150 մ, որի առավելագույն հաղթահարվող թեքությունը՝ 10-15% է:

Հորիզոնների բացումը իրականացվում է մուտքային ճանապարհից կապիտալ խրամի անցումով, որից հետո կատարվում է պիոներական խրամի անցում: Պիոներական խրամների անցումը կատարվում է CMP-026/1 մակնիշի քարհատ մեքենայի միջոցով: Հաջորդ հորիզոնները նույնպես նախատեսվում է բացել մուտքային ավտոճանապարհից կտրող խրամի միջոցով: Հանքավայրի բացման համար նախատեսվող շինարարության ժամանակ արդյունահանված լեռնային զանգվածի քանակն 2400 մ³ է, որը ամբողջությամբ մակաբացման ապարներ են, քանի որ հանքավայրը նախկինում արդեն բացված է եղել: Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակող, ցածրաստիճանային մշակման համակարգով: Արդյունահանման տեղամասում ստացված ուղիղ կտրված քարերի բարձումը սպառողի տրանսպորտային միջոցների մեջ կատարվում է ձեռքի միջոցով: Բուլդոզերի աշխատանքները բացահանքի պայմաններում կայանում են արտադրական թափոնների տեղափոխման և կուտակման, ցանկալի մակաբացման ապարների տեղափոխման մեջ: Դրանց տարեկան ծավալները համապատասխանաբար կազմում են 9029 մ³/տարի և 2419 մ³/տարի: Բուլդոզեր T-330 մակնիշի բուլդոզեր



(փխրեցուցիչով սարքավորված) հերթափոխային արտադրողականությունն կազմում է, արտադրական թափոնների տեղափոխման ու կուտակման ժամանակ 1000 մ³/հերթ, իսկ լցակույտերում ապարների տեղափոխման և լցակույտերի ձևավորման ժամանակ 600 մ³/հերթ: Լեռնային աշխատանքների զարգացումը բացահանքում կատարվում է բացահանքի մշակման ժամանակացույցային պլանին համապատասխան, որի համաձայն արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել 0,42 մ բարձրությամբ հանքաստիճաններով, վերևից-ներքև, մեխանիզացված եղանակով:

Տեղամասի տարածքում մակաբացման ապարները ներկայացված են 0.1-ից մինչև 0.2 մ(միջինը 0.13 մ) հզորության փխրուն կավավազային առաջացումներով և 2.24 մ միջին հզորությամբ ուժեղ ճեղքավորված տուֆերի փուշտաշերտով: Մակաբացման ապարների ծավալը կազմում է 48378 մ³: Մակաբացման ապարները կտեղափոխվեն լցակույտ S-330 բուլդոզերով (կամ 5511 KAMA³ բեռնատարով)՝ հետագա վերամշակման, պաշտպանիչ ծառաշերտը տնկելու և աճեցնելու նպատակով: Լցակույտը գտնվում է բացահանքի արևելյան մասում: Մշակվող տուֆի զանգվածի քանակը տարվա ընթացքում կազմելու է 15747մ³:

Լցակույտում պահեստավորվելու են հողաբուսական առաջացումները և փուշտաշերտի ջարդոտված տուֆերը: Հանքավայրի շահագործման սկզբնական շրջանում մակաբացման ապարների մի մասը՝ փուշտաշերտի ջարդոտված տուֆերը, որոնք հետագայում նախատեսվում է վերամշակել, պահեստավորվում են բացահանքի սահմաններից դուրս՝ լցակույտերի տեղամասում: Լցակույտում տարանջատված պահպանվելու է նաև հողային զանգվածը:

Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում, որի ժամանակ մակաբացման ապարներով հողախառն զանգվածը պահեստավորվելու է և օգտագործվելու է ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ կանաչապատման նպատակով:

Բացահանքի ջրամատակարարումը և ջրահեռացումը տեխնիկական ջրով կատարվում է կտրման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է GAZ-ATZ-2.4-52 (GAZ-52-04) բեռնատար ջրատար մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով: Հետևաբար բացահանքում ջրահեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Լեռնային աշխատանքների հետևանքով փոշու առաջացման աղբյուրներն են՝ ավտոտրանսպորտը, լցակույտերը, բարձման աշխատանքները և քարի կտրման աշխատանքները: «Վահանատուֆ» տեղամասի տարածքում օրեկան կտրվածքով ձևավորվում է 0.57մ³ կենցաղային կեղտաջրեր, ինչը լցվում է բետոնային անջրաթափանց լցարան:

Արտադրական կեղտաջրերի արտահոսքեր տեղամասի սահմաններում չեն առաջանում: «Վահանատուֆ» տեղամասի տարածքում ընդերքօգտագործման թափոն հանիդսացող մակաբացման ապարների ծավալը կազմում է 45679մ³: Հողերի պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը հանվում և պահպանվում է, բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվելու են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը: Մակաբացման ապարները կտեղափոխվեն բացահանքի արևելյան մասում գտնվող լցակույտ S-330 բուլդոզերով (կամ 5511 KAMA³ բեռնատարով): Հողային զանգվածը և փուշտաշերտի առաջացումները



կուտակվելու են տարանջատված: Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ 9029 մ³/տարի կամ 34.7 մ³/հերթ ծավալով աշխատանքային հանքաստիճաններում տեղափոխվում է 5 - 10 մ հեռավորության վրա և կուտակվում, այնուհետև վաճառվում, որպես բետոնի թեթև լցանյութ: Արտադրական արտաքին լցակույտը արդեն իսկ ձևավորված են բացահանքի արևելյան, հարավ-արևելյան մասում: Դրանց զբաղեցնում են 1.4 հա տարածք: Սույն նախագծի շրջանակներում նոր լցակույտերի ձևավորում չի նախատեսվում:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, տուֆերի բարձման և տեղափոխման աշխատանքները, լցակույտի ձևավորումը, ճանապարհների տրանսպորտի տեղաշարժը: Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ կընդունվի 80դԲԱ:

Նախնական հաշվարկներով արդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված կառաջանան տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, ըստ հաշվետվության թրթռումները չեն գերազանցի սահմանային թույլատրելի մակարդակը:

Աղմուկի և տատանումների կառավարման համար նախատեսված են՝ աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով, բեռնատար մեքենաների տեղաշարժ նախապես մշակված և համաձայնեցված մշակված գրաֆիկով, տեխնոլոգիական սարքավորումների տեղադրում տատանումներ մեկուսացնող հատուկ հիմքերի վրա, բաց դիմաձածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումները, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, այդ միջոցառումներից են՝

- լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորում, լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա չեզոքացուցիչների տեղադրում, ինչը կնվազեցնի, կկրճատի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում՝ մակաբացման շերտի ապարներով,
- լցակույտի, խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում,
- արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները,
- շահագործման արդյունքում առաջացող կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, ինչի հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով,



➤ կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ՝ վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություններ և այլն:

Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, արտակարգ իրավիճակների կառավարման բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 3693.8 հազ. ՀՀ դրամ, ինչը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամազբխին Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Օթևանի «Վահանատուֆ» տեղամասի տուֆերի հանքավայրի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդը աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4. Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 2455 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Արագածոտնի մարզի Մեծածոր համայնքի Օթևան բնակավայրում: Օթևան բնակավայրի ղեկավարի նստավայրում, անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, Մեծածոր համայնքից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են լեռնային նախապատրաստական աշխատանքների և արդյունահանման հետ՝ համաձայն գնահատման հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:



Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Մեծածոր համայնքում (Օթևան բնակավայր) ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

3. Աշխատանքների իրականացման ընթացքում բացառել որևէ ազդեցություն հայցվող տարածքի մոտակայքով անցնող սելավատարի վրա:

4. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

5. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:

6. Հետագայում՝ խճի և ավազի արտադրության համար նախատեսվող արտադրամասիում, ջարդիչ կայանքի նախատեսման դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեության նախագծման փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

8. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:



ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մեզա Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Օթևանի տուֆերի հանքավայրի «Վահանատուֆ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնագ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան